**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն, շ.1, Հեռ. 060656505 , info@mecamor.am

N **04573**
*07 հոկտեմբեր 2024թ.*

**«ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ**
**ՏՆՕՐԵՆ**
**Գ. ՌՈՒԲԵՆՅԱՆԻՆ**

**«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ**
**ՏՆՕՐԵՆ**
**Ա ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

Հարգելի գործընկերներ

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2024 թվականի փետրվարի 7-ին հայտարարված ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 2-րդ և 9-րդ փողոցների կոյուղու կառուցման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/12 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ - «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ կոնսորցիումը և 02.04.2024 թ-ին Ձեզ հետ կնքվել է ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/12 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում, հետագայում, հատկացվել են ֆինանսական միջոցներ և 19.06.2024թ-ին կնքվել է ֆինանսական միջոցների հատկացման, օրացուցային գրաֆիկի և վճարման ժամանակացույցի հատկացման համաձայնագիր:

Պայմանագրով սահմանված շինարարական աշխատանքների կատարման ժամկետը ավարտվել է, սակայն սահմանված աշխատանքները չեն կատարվել, իսկ որոշ չափով կատարված աշխատանքներում արձանագրվել են խախտումներ և շեղումներ,

մասնավորապես՝ ս.թ. սեպտեմբերի 26-ի դրությամբ Պայմանագրի ընդհանուր գնի՝ 32,400,000.00 ՀՀ դրամի չափով սահմանված ծավալից կատարվել է 11,340,000.00 ՀՀ դրամի չափով ծավալը, որը կազմում է ընդհանուրի 35%-ը: Պայմանագրում՝ համայնքի մասնաբաժինը կազմում է Պայմանագրի ընդհանուր գնի 35%-ը՝ 11,340,000.00 ՀՀ դրամի չափով, որը վճարվել է «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ - «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ կոնսորցիումին՝ ամբողջովին: Պետության մասնաբաժինը կազմում է Պայմանագրի ընդհանուր գնի 65%-ը՝ 21,060,000.00 ՀՀ դրամի չափով, սակայն նշված ծավալով աշխատանքները չեն իրականացվել:

Վերոնշյալի շրջանակում կատարվել է մշտադիտարկում, պարբերաբար տեղի են ունեցել զգուշացումներ, սակայն Պայմանագրով սահմանված պարտավորությունները չեն կատարվել Ձեր կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը, սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ Պայմանագիրը 2024 թվականի հոկտեմբերի 07-ից միակողմանի ամբողջապես լուծվել է:

Միաժամանակ, հայտնում ենք, որ սույն Պայմանագրի շրջանակում սահմանված կարգով Ձեր կողմից ներկայացվել է որակավորման ապահովում՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից 19 հունիսի 2024 թ-ին թողարկված բանկային երաշխիքի տեսքով՝ «ԵՐԱՇԽԻՔ ԹԻՎ 23 01 40 602591/30»՝ 7,553,000.00 (յոթ միլիոն հինգ հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովում՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից 19 հունիսի 2024 թ-ին թողարկված բանկային երաշխիքի տեսքով՝ «ԵՐԱՇԽԻՔ ԹԻՎ 23 01 40 602591/31»՝ 5,036,000.00 (հինգ միլիոն երեսունվեց հազար) ՀՀ դրամի չափով: Նշյալ բանկային երաշխիքներով նշված գումարները՝ չկատարված ծավալների չափով, սահմանված կարգով պետք է գանձվի «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ - «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ կոնսորցիումից: Չկատարված գումարների չափով որակավորման ապահովման մասով գանձման ենթակա գումարի չափը կազմում է 4,909,450.00 (չորս միլիոն ինը հարյուր ինը հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ, իսկ պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 5,036,000.00 (հինգ միլիոն երեսունվեց հազար) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք նաև, որ վերոնշյալի կապակցությամբ Մեծամորի համայնքապետարանը դիմել է նշյալ բանկային երաշխիքները թողարկած՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում Մեծամորի համայնքապետարանը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

**Հարգանքով՝**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ՝ Ն. Հակոբյան*
*+37498393676*